

ՄԱՐԱ ՄԵՀՐԱԲՅԱՆ



ՄԿՆԵՐԻ ԽՆՃՈՒՅԻԸ

891.99Ն
Մ-57

Հ Ա Յ Պ Ե Տ Ր Ա Տ

ՀԼԿՅԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿՈՍՏԱՆԵԿԱՊՈՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ՍՊԻՐԻՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

1940

891.99U
Մ-57
UR



Նկարները ԱՆ. ԳԱՍՊԱՐՅԱՆԻ

Մեծ անտառի բացատում,
Մի գետնափոր անակում,
Բնակվում եր ապահով՝
Մայր մուկը իր ձագերով:

Ձմեռ եր, ցուրտ եր սաստիկ,
Յեզ մկնիկները սրտիկ
Լալիս եյին ու մրսում,
Գարնան գալուն սպասում:

Իսկ մայր մուկը որն ի բուն
Միտք եր անում,— դուրսը ձյուն.
Տունը դատարկ կեր չըկա,
Գարունը յե՞րբ պիտի գա:

Մի քիչ հեռու բնիկից,
Ապրում եյին դուռ—դռիկից
Կանաչ զորտեր ճահճուտում,
Իրենց սառցի անակում:



1894
40

(21206.60)

Մկնիկները բնիկում,
Ծվծվում են, լաց լինում.
— Ա՛խ, այսպես ել հոգս ու ցամփ,
Մեր պաշարը վերջացավ:

Սիրտ եր տալիս մայր մուկը.
— Ի՞նչ ե ձեր լաց—աղմուկը.
Քիչ ել կացեք, իմ ձագեր.
Շատ մի լինեք անհամբեր:

Կգա շուտով գարունը,
Են ծաղկաբեր սիրունը,
Ու կունենանք առատ կեր,
Մի լաց լինեք, իմ մկներ:

Յեվ իսկապես շատ չանցավ,
Զյունը իսպառ չքացավ,
Արևն ամպից դուրս նայեց
Ու տաք, անո՛ւշ ծիծաղեց:

Մուկը բնից նայեց դուրս,
Ո՛, ինչ լավ ե, ո՞ ինչ լույս.
Մնացել ենք ձեզ կարոտ
Բարով, այ սար ու արոտ:

Մեկ ել տեսավ դիմացի
Այն գորտիկը դրացի,
Դեպի իրեն ե գալիս,
Ուրախ բարե ե տալիս:

— Բարե, բարե դրացի,
Շատ ուրախ եմ, իմացի.
Կանաչ գարուն ե յեկել,
Սարեր, ձորերը ծաղկել:

— Գարնան գալը շնորհավոր,
Տեսնենք այսպես շատ-շատ որ.
Արի մկնիկ, մենք և դուք,
Կազմենք ուրախ մի խնճույք:

— Աչքիս վրա, կռկռան,
Համաձայն եմ յես դրան.
Խելոք ու լավ ես խոսում,
Յես ել հենց այդ եմ ուզում:

Կանչիր դու քո գորտերին,
Մեծ ու պստիկ բոլորին.
Յես ձագերիս ծվծվան,
Խնճույք անենք, հարևան:



Յեկան ճահճից դիմացի
Գորտեր, մկներ դրացի,
Յեվ խնձուղթին բնձաներ,
Բերին շատ-շատ բարիքներ:

Մի գորտ բերեց մեծ քսակ՝
Լիքը մժեղ ու մսձակ,
Իսկ մկները անտառի՝
Կաղին, ընկուղ և մորի:

Ու միասին սրտաբաց,
Ծաղիկներով գարդարված,
Են բացատում բուրավի,
Սեղան բացին բերքով լի:

Ծափ ու ծիծաղ, յերգ ու տաղ,
Պար են գալիս կենսուրախ,
Են գորտերը կուլուան,
Մկնիկները ծվծվան:

Բայց մկնիկը՝ վաղեմի՝
Ունեյին մի թշնամի—
Գող, շատակեր, չար սասախի,
Փափկամազիկ մի փիսիկ:



Մանամ տատի այդ կատուն,
Գլխապատառ ընկավ տուն.
— Ակնոցդ տուր, այ տատիկ,
Գնամ խնճույք յես մոտիկ:

Ու զարդարված, անճանաչ
Մտավ բացատն այն կանաչ.
Ու խոսքերով շողոքորթ—
— Բարե, ասավ, մուկն ու գորտ:

— Բարե յեկար, ասացին,
Նրանք բոլորը միասին,
Յեվ չիմացան ով ե դա,
Արին իրենց թամազա:

— Մկնիկ քույրիկ, խնամի,
Շնորհավոր թող լինի,
Ե՛յ զուռնաչի, լավ փշի,
Ով չի պարի, ամաչի:

Այսպես քեֆը տաքացավ,
Յեվ փոչ մեկը չիմացավ,
Վոր թամազեն չի ճաշում,
Այլ ախորժակ ե պահում:



Մեկ ել կատուն խորամանկ՝
— Յեկեք մի լավ խաղ խալանք,
Աչիկներդ կապեցեք,
Զանգը խփեմ, բռնեցեք:

— Այ ծըլնգան, ծըլնգան,
Մոտս տեսնեմ այս ո՞վ կան,
Ասաց կատուն ու բռնեց,
Մկնիկներին փոքր ու մեծ:

Գորտերը այդ վոր տեսան,
Թողին խնձուկք ու սեղան.
Սարսափահար ու դժգույն,
Հնայ, նետվեցին մոտ առուն:
1939. թ



ՀՀ Ազգային գրադարան



NL0399937

11224

ԳԻՆԸ 1 Գ.

Խմբագիր՝ Միլտոն Սերանյան
Տեխ. խմբագիր՝ Ան. Գառնարյան
Կոտորակի նկարիչ՝ Ան. Մխիթարյան
Սրբագրիչ՝ Ս. Փարսադանյան

М. МЕГРАБЯН
ПИР МЫШЕЙ
Գրք Արմ. ՍՍՐ, Երևան, 1940

Գլխավորի լիազոր՝ Բ—1024. Հրատ. 5094.
Պատվեր 880. Տիրամ 4000.
Հայպետհրատի I տպարան, Յերեան, Լենինի, 85.